**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«5» հունիսի 2026 թ. N 80-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի ապրիլի 21-ի N 59-Ա հրամանի 2-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով վարչական վարույթի շրջանակում գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների լրացուցիչ պարզաբանման, «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) լսված լինելու իրավունքի ապահովման և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման իրական և երաշխավորված հնարավորության ապահովման անհրաժեշտությունը՝

1. արձանագրելով, որ 2026 թվականի մայիսի 6-ին նշանակված լիցենզավորող հանձնաժողովի նիստին Ընկերության կողմից մասնակցություն չի ապահովվել, և վարչական վարույթի տվյալ փուլում գործի նյութերում առկա չեն նախաձեռնված վարչական վարույթով Ընկերությունից պահանջված և հարցի ամբողջական, լրիվ և օբյեկտիվ քննության համար անհրաժեշտ ամբողջական փաստաթղթերը,

2. հաշվի առնելով նաև, որ վարչական վարույթի շրջանակում վերջնական որոշման ընդունումից առաջ անհրաժեշտ է ապահովել Ընկերության՝ բացատրություններ, առարկություններ, լրացուցիչ փաստաթղթեր և ապացույցներ ներկայացնելու իրական

հնարավորություն, ինչի արդյունքում անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն և պարզել նման ապահովման իրավական ու փաստական շրջանակը, այդ թվում՝ իրացման հնարավոր մեխանիզմների առկայությունն ու արդյունավետությունը

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի ապրիլի 21-ի N 59-Ա հրամանի 2-րդ կետով նախաձեռնված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել 10 օրով և սահմանել մինչև 2026 թվականի հունիսի 9-ը:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Պարտականությունները կատարող՝

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2102800415

2026-06-05 19:10:55 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ